Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

13.05.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 11.05.2015թ.-ի թիվ 60 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնում անցկացվեց 2015թ.-ի գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց բաժնի պետ՝ Ն.Մաղաքյանը:

Նախնական տվյալներ.

Բաժնում ընդգրկված են բաժնի պետը և 1 առաջատար մասնագետ: Բաժինը ղեկավարում է բաժնի պետը: Բաժինը ունի բաժնի կանոնադրություն՝ հաստատված մարզպետի կողմից: Բաժնի պետը և աշխատակիցը համարվում են քաղաքացիական ծառայողներ:

Նպատակը.

Համապատասխանության աուդիտի միջոցով մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացում է տրվում՝ բաժնի գործունեության օրենքներին, իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Աուդիտի հիմնական ուղղությունը.

ա/ Բաժնի կանոնադրության, աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքների և պարտականությունների համապատասխանությունը <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և գանգատները քննարկելու կարգի մասին>>, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքների և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի պահանջներին:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքը կատարեցին՝ ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ՝ Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության փորձ:

Համադրել ենք <<Քաղաքացիական ծառայության մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>>, <<Իրավական ակտերի մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>>, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>>, <<Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և

գանգատները քննարկելու կարգի մասին>>, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքներով և Հայաստանի Հանրապետության նախագահի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> 1997թ.-ի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրով սահմանված, մարզպետին վերապահված լիազորությունները բաժնի կանոնադրությամբ սահմանված լիազորությունների հետ:

Եզրակացություն.

Համադրման արդյունքում պարզեցինք, որ բաժնի կանոնադրությամբ և բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքներն ու պարտականությունները համապատասխանում են ՀՀ նախագահի հրամանագրով, համապատասխան օրենքներով և իրավական այլ ակտերով մարզպետին վերապահված լիազորությունների պահանջների հետ:

Ներքին աուդիտորներ՝ Ն. Կարապետյան

Հ. Ավետիսյան

Իրավաբանական բաժնի պետ՝ Ն. Մաղաքյան